ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
YEREVAN STATE UNIVERSITY

ԱՐԱԲԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

JOURNAL OF ARABIC STUDIES

№ 11

ISSN 1829-4510

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
YEREVAN YSU PRESS

2019

Հրատարակվում է ԵՊՀ արևելագիտության
ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Published by the decision of the scientific council of
the Oriental Studies Department, Yerevan State University

Խմբագրական խորհուրդ

Դավիթ Հովհաննիսյան – բ.գ.թ., պրոֆեսոր (նախագահ)
Ռուբեն Կարապետյան պ.գ.դ., պրոֆեսոր
Արշակ Փոլադյան պ.գ.դ., պրոֆեսոր
Գուրամ Չիկովանի բ.գ.դ., պրոֆեսոր (Վրաստան)
Մուշեղ Ասատրյան PhD (Կանադա)
Սոնա Տոնիկյան բ.գ.թ., դոցենտ
Հայկ Քոչարյան պ.գ.թ., դոցենտ

Editorial Board

Prof. David Hovhannisyan (editor in chief)
Prof. Ruben Karapetyan
Prof. Arshak Poladyan
Prof. Guram Chikovani (Georgia)
Mushegh Asatryan, PhD (Canada)
Dr. Sona Tonikyan
Dr. Hayk Kocharyan

Կազմին՝ Աբդ Ալլահ Մուսավիր, «Կրոնագետների ժողով», 16-րդ դ. կես. պահվում է Նելսոն-Ատկինսի արվեստի թանգարանում, Կանզաս, Միսուրի:

© Երևանի պետական համալսարան, 2019
© Yerevan State University, 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գայանե Մկրտումյան
ՍԱՍԱՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՆՎԱՃՈՒՄԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ 7-19

Հասմիկ Փարեմուզյան
ԱՍԱԲԻԱՅԱՆ ԵՎ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՊՏՈՒՅՏԸ ԸՍՏ ԻԲՆ ԽԱԼԴՈՒՆԻ 20-33

Անդրանիկ Հարությունյան
ՕՄԱՆԻ ՀԱՆԳՈՒՅԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ «ԵՐԵՔ ԾՈՎԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ» 34-47

Արա Մաթևոսյան
ՍԱՌԻԴԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՏՐԱՄՆՖՈՐՄԱՑԻԱՆ 2006-2017ԹԹ.-ԻՆ 48-70

Արսեն Առաքելյան
ԱՐԱԲԵՐԵՆԻ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՆԱԽԴԱՅԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ 71-88

Թերեզա Ամրյան
ԵԶԴԻԱԿԱՆ ԿՐՈՆԱԿԱՆ ՀԻՄՆԵՐՈՒՄ ԱՍՏԾՈՒՆ ՄԵԾԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԻՐԱՌՎՈՂ ԻՐԱՆԱԿԱՆ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՊԱՏՎԱՆՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ 89-111

Մարիամ Շիպակցյան
ԱՐԱԲԱԿԱՆ ՀԻՓ ՀՈՓԸ՝ ՈՐՊԵՍ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՐԱԲԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԻ ՄԱՐՄՆԱՎՈՐՈՒՄ 112-126

Սեդա Տիգրանյան
ԻՍԱՆ ԵՎ «ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ»ԴԱՎԱՆԱՆՔԸ
ՂՈՒՐԱՆՈՒՄ ՈՒ ՍՈՒՆՆԱՅՈՒՄ 127-142

Արմինե Հակոբյան
ԱԲՈՒ ԲԱՔՐ ԱՍ-ՍՈՒԼԻՆ ԵՎ ՆՐԱ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ 143-165

Հայկ Քոչարյան
«ԻՍԼԱՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ 166-173

Ռուզաննա Հովհաննիսյան
ԻՍՄԱՅԻԼԱԿԱՆ ԴԱՈՒԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ.
ԱԴԱՊՏԱՑԻՈՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ
ԻՍՄԱՅԻԼԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 174-188

CONTENT

Gayane Mkrtumyan
THE CONQUEST OF THE SASANIAN PERSIA
IN THE MEDIEVAL MUSLIM AND
ARMENIAN HISTORIOGRAPHY 7-19

Hasmik Paremuzyan
IBN KHALDUN'S VIEW ON ASABIYYA
AND CIRCLES OF POWER 19-33

Andranik Harwutyunyan
THE CENTRAL ROLE OF OMAN
IN THE "THREE SEA SYSTEM" 34-47

Ara Matevosyan
THE TRANSFORMATION OF THE ROYAL
SAUDI FAMILY (2006-2017) 48-70

Arsen Arakelyan
THE STANDARTISATION PROCESS OF THE ARABIC
IN NAHDA PERIOD 71-88

Tereza Amryan
ON SOME EPITHETS OF GOD WITH IRANIAN AND
ARABIC ORIGIN IN YEZIDI RELIGIOUS HYMNS 89-111

Mariam Shipaktsyan
ARABIC HIP HOP AS AN INCARNATION OF THE
MEDIEVAL ARABIC POETIC TRADITION 112-126

Seda Tigranyan
PROPHET ISA AND THE CONCEPT OF THE HOLY
TRINITY IN THE QUR'AN AND SUNNAH 127-142

Armine Hakobyan
ABU BAKR AS-SULI AND HIS ERA 143-165

Hayk Kocharyan
SOME ASPECTS OF THE DEVELOPMENT OF
THE CONCEPT OF ISLAMISM 166-173

Ruzanna Hovhannisyan
ISMAILI DAWA IN THE MODERN PERIOD. APPLICATION OF
ADAPTATION OF MECHANISMS IN CONTEXT OF
TRANSFORMATION OF ISMAILI IDEAS 174-188

ՍԱՍԱՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՆՎԱՃՈՒՄԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Գայանե Մկրտումյան
պ. գ. թ., դոցենտ
ԵՊՀ արաբագիտության ամբիոն
էլ-փոստ՝ g.mkrtumyan@ysu.am

Բանալի բառեր՝ *Արաբական արշավանք, հաշտության պայմանագիր, պարսիկ մարզպան, գլխահարկի վճարում, անձի ապահովություն, պարսկա-բյուզանդական պատերազմ, իսլամի հովանավորություն, հողատրական-ժառանգական իրավունք, ռազմատուգանք, պարսից թագավոր*

Մերձավոր Արևելքի երկրների միջնադարյան պատմության ուսումնասիրման համար կարևոր նշանակություն ունեն մուսուլմանական և հայկական աղբյուրները, որոնք անդրադառնում են նաև 7-րդ դարի երկրորդ կեսին սկսված արաբական արշավանքներին դեպի Սասանյան Պարսկաստան: Պարսկա-բյուզանդական պատերազմները (572-591թթ., 602-628թթ., մոտ 45 տարի) արյունաքամ էին արել Բյուզանդական կայսրությունն ու Սասանյան Պարսկաստանը: Արդյունքում այդ երբեմնի հզոր տերությունները ի վիճակի չեղան դիմադրելու արաբական արշավանքներին:

Հետազոտողները, հաշվի առնելով Մերձավոր Արևելքում արաբական արշավանքների և ռազմական հետագա տեղաշարժերի հաջորդականությունը, արաբական զորքերի ռազմական գործողությունները բաժանում են երեք շրջանի. 1)

մինչև Հիրա քաղաքը, 2) Հիրայից մինչև Քտեսիֆոն, 3) Քտեսիֆոնից հետո[1]:

633թ. զորավար Խալիդ իբն ալ-Վալիդի գլխավորությամբ արաբական զորքը շարժվեց դեպի Իրաք: Իր ճանապարհին գրավելով մի քանի քաղաք-ամրոցներ (Օբոլլա, ալ-Կազիմ)՝ Խալիդը մոտեցավ Հիրային, որը Սասանյան Պարսկաստանի ռազմական կարևոր հենակետերից մեկն էր: Քաղաքը պարիսպներ չուներ, այստեղ կային լավ ամրացված մի քանի ամրոցներ և եկեղեցիներ: Կարճատև մարտերից հետո քաղաքի բնակչությունը խաղաղություն խնդրեց արաբներից ռազմատուգանք և ամեն տարի գլխահարկ վճարելու պայմանով [2] : Ըստ 9-րդ դարի մուսուլման պատմագիր Ալ-Բալազուրիի՝ քաղաքի վեց հազար չափահաս տղամարդ պարտավորվում էր վճարել 14 դիրհեմ, ամեն տարի հարյուր հազար դիրհեմ չափով: Բնակչությունը պետք է լրտեսություն աներ արաբների համար պարսիկների դեմ, իսկ Խալիդը չպետք է ոչնչացներ նրանց եկեղեցիներն ու ամրոցները[3]: Իսկ 10-րդ դարի պատմագիր Ալ- Տաբարին գրում է, որ քաղաքի բնակիչները հարկ էին վճարում՝ 190 հազար դիրհեմի չափով: Պատմագիրը նշում է, որ սա առաջին գլխահարկն էր, որ վճարում էր Իրաքի (Սավադ) բնակչությունը: Գլխահարկից ազատվում էին հոգևորականները և օտարականները [4] : 8-րդ դարի հայտնի մուսուլման իրավագետ Աբու Յուսուֆը ևս անդրադարձել է Հիրայի բնակչությանը տված պայմանագրին, ըստ որի քաղաքի բնակիչներին թույլ էր տրվում հնչեցնել եկեղեցիների զանգերը և տոն օրերին խաչը հրապարակավ դուրս հանել: Բնակիչները սուտ ցուցմունքներ չպետք է տային:

---

[1] Колесников А., Завоевание Ирана арабами, Москва, 1982, с. 56:

[2] Ibn al-Athir, Al-Kamil fi al-Tarikh, II, Kahira, 1930, p. 266:

[3] Al-Balazouri, Futuh al-Buldan, Bayrut, 1983, p. 240-241:

[4] Ibn Jaafar, Jarir al-Tabari, Tarikh al-rusul wa al-muluk, III, Kahira, 1962, 2017/I.

Պայմանագրում նշվում էր, որ իսլամի հովանավորության տակ անցած քրիստոնյաները իրենց հագուստով և արտաքինով պետք է տարբերվեին մուսուլմանից[5]: Հիրան որոշ ժամանակ ռազմական հենակետ հանդիսացավ արաբների համար, որտեղից Խալիդը հսկում էր սահմանային ամրությունները: Հիրայի նվաճման մասին հիշատակում է նաև 8-9-րդ դարերի քրիստոնյա պատմագիր Թեոփանես Խոստովանողը[6]: Խալիդին հաջողվեց գրավել նաև Հիրայի շրջակայքում գտնվող մի շարք բնակավայրեր (Բանկիյա, Ալյաս) և ապահովության գիր (աման) տվեց տեղի բնակչությանը: Այնուհետև նա շարժվեց դեպի Այն ալ-Թամր ամրոցը և բռնի ուժով գրավեց այն, օգտվելով տեղի պարսկական կայազորի և քրիստոնյա-արաբների միջև ծագած հակասություններից: Մուսուլման պատմագիրները հիշատակում են, որ Խալիդը տեղի եկեղեցում գտավ քառասուն արաբ երիտասարդների, որոնք Ավետարան էին սովորում և գերեվարեց նրանց[7]: Սակայն, երբ Խալիդը հեռացավ Հիրայից, տեղի բնակչությունը դրժեց նրա հետ կնքած իր պայմանագիրը, և քաղաքը երկրորդ անգամ գրավեց զորավար ալ-Մուսաննան, վերականգնելով նախկին պայմանագիրը[8]:

636թ. Կարմուկում բյուզանդացիների դեմ տարած հաղթանակից հետո արաբական զորքերը կրկին մոտեցան Սասանյան Պարսկաստանի սահմաններին զորավար Սաադ իբն Աբու Վակասի գլխավորությամբ և բանակ դրեցին Քադեսիայի մոտ: Արաբական մեծաքանակ զորքի առկայությունը անհանգստություն պատճառեց պարսից մեծամեծներին Սասանյան Պարսկաստանի մայրաքաղաք Քտեսիֆոնում (ալ-

[5] Православный палестинский сборник, 50-й выпуск, т.17, С.П.,1897, с.1326-1327:
[6] Թեոփանես Խոստովանող, բյուզանդական աղբյուրներ Դ, Երևան, 1983, էջ 50:
[7] Ibn Jaafar, Jarir al-Tabari, Tarikh al-rusul wa al-muluk, III, Kahira, 1962, 2064/I.
[8] Նույն տեղում, 2045/I:

Մադաին): Քաղեսիայի ճակատամարտի մասին վկայում է հայ միջնադարյան պատմագրությունը: 7-րդ դարի հայ պատմագիր Սեբեոսը գրում է, որ երբ պարսից թագավորությունը թուլացավ, «յայնժամ զաւրացն Իսմայելի… երթեալ պաշարեցին զՏիզբոն, զի անդ նստէր թագաւորին Պարսից» [9] : Պարսկական զորքերը միավորվեցին Ռուստամի (Սեբեոսի մոտ՝ Ռստամ) զորավարի գլխավորությամբ ութսուն հազար հեծյալներով և նախապատրաստվեցին մարտին: Արաբները անցան Տիգրիս (Դգլաղ) գետը և հասան Հերթիճան [10] գյուղը: Ըստ պատմագրի՝ պարսկական կողմում կռվում էին «Մուշեղ Մամիկոնեան որդի Դաւթի, զաւրաւարն Հայոց երեք հազար սպառազինաւք, և Գրիգոր իշխանն Սիւնեայ տէրն՝ Ռ արամբ» [11] : Արաբներին հաջողվեց կոտրել թշնամու դիմադրությունը: Ըստ պատմագրի՝ բոլոր անվանի նախարարները զոհվեցին, սպանվեցին նաև Ռոստամ զորավարը, Մուշեղը՝ երկու քեռորդիների հետ, Սյունյաց տեր Գրիգորը՝ որդու հետ:

10-11-րդ դարերի հայ պատմագիր Մովսես Կաղանկատվացին, որը Սասանյան Պարսկաստանի նվաճումը ներկայացնում է շաղկապված 7-րդ դարի 2-րդ կեսի Աղվանքի պատմության հետ, գրում է, որ երբ թագավորեց պարսից Խոսրով թագավորի որդի Հազկերտը, «հագարացիները» տասներկու ցեղերով միաբանվելով, խրոխտ և հսկայական բազմությամբ անցան անապատով, Ասորեստանով և հարձակվեցին «ընդդէմ թագաւորին Պարսից» [12] : Իմանալով այդ մասին, պարսիկ

[9] Պատմութիւն Սեբէոսի, Երևան, 1979, էջ 137:
[10] Հերթիճան – Պարսկաստանի սահմանամերձ գյուղերից է – Սեբեոս, Պատմություն, Երևան, 2005, էջ 354:
[11] Պատմութիւն Սեբէոսի, էջ 137:
[12] Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1912, էջ 198:

մեծամեծները զորաժողով արեցին, որին մասնակցում էր նաև Աղվանքի Վարազ-Գրիգոր իշխանի որդի Զվանշիրը: Պատմագիրը գրում է, որ պարսիկ զորավարը (ակներևաբար Ռուստամը), վերցնելով իր զորքը, անցավ Տիգրիսը և «եհաս ի Վեհկաւատ գաղառ»: Նա «պարծեալ ի բազում զօրս իւր մեծամեծս՝ խրոխտայր առաթուր հարկանել զհարաւայինս զամենայն»[13]: Նրա զորքում արաբների դեմ կռվում էր նաև Զվանշիրը՝ մեծ սխրանքներ գործելով: Ըստ պատմագրի հիշատակության՝ երկու օր հետո երեսուն հազար հեծյալներ ու տասը հազար հետևակ նրանց դեմ ճակատամարտեցին: Քաղեսիայից (Մովսես Դրասխանակերտցու մոտ՝ Կատղանից) եկած հագարացիները «ասպարախիտ շարժմամբք, յառաջ խաղացեալք նախաձեռն լինեին հարկանել զզօրս Պարսից»[14]: Այս կռվում ծանր վիրավորվեց Զվանշիրը: Պարսից արքա Հազկերտը բարձր գնահատելով նրա ծառայությունները, պատվեց Զվանշիրին թանկարժեք նվերներով:

Քաղեսիայի ճակատամարտի մասին համառոտ հիշատակությունների հանդիպում ենք նաև 12-րդ դարի պատմագիր Միքայել Ասորու մոտ: Նա գրում է, որ արաբների (պատմագրի մոտ՝ տաճկաց) Սաադ զորավարը Յասրիբից (իյԱթրաբայ) դուրս գալով բանակ դրեց Քուբար քաղաքի մոտ: Հազկերտը (Աղտաճատ) եկավ և բանակ դրեց նրա դիմաց Եփրատ գետի մոտ: Երկու կողմերի միջև բռնկված ծանր մարտը ավարտվեց արաբների հաղթանակով, որոնք պարսկական զորքին «փախստական տարան … մինչեւ ի Կատիզբոն, սակաւք և անզէնք ի Տաճկաց՝ զբազումս և զզինեալս ի Պարսից»[15]: Նա մանրամասն նկարագրում է, թե ինչպես մի պարսիկ զինվոր փորձում էր

[13] Նույն տեղում, էջ 199:
[14] Նույն տեղում:
[15] Ժամանակագրութիւն Տեառն Միխայէլի Ասորւոց պատրիարքի, Երուսաղէմ, 1871, էջ 306:

փախչել, սակայն արաբները սպանեցին նրան: Այս դեպքի մասին հիշատակում են նաև մուսուլմանական աղբյուրները[16], որոնք ավելի մանրամասն են նկարագրում Քադեսիայի ճակատամարտի ընթացքը նշում, որ պարսիկ զորավար Ռուստամը հսկայական զորք հավաքեց՝ մոտ՝ 40 հազար, 30-33 ռազմական փղերով 25-30 հազար արաբների դեմ[17]: Ըստ Ալ-Տաբարիի՝ նա իր մոտ կանչեց Հիրա քաղաքի մեծամեծներին և մեղադրեց նրանց, որ նրանք ծառայում են արաբներին և հարկեր են վճարում նրանց: Նա հույս ուներ բանակցությունների միջոցով լուծել այս հակամարտությունը, սակայն արաբները մերժեցին նրա առարկությունները[18]:

Ճակատամարտը տևեց մի քանի օր, որի մանրամասն նկարագրությունը առկա է մուսուլման պատմագիրների երկերում[19]: Ծանր կորուստները վիրավորների մեծ քանակը ստիպեցին արաբական զորքին մեկ ամիս մնալ Քադեսիայում, որից հետո արաբները Եփրատով ուղևորվեցին հետապնդելու պարսկական զորքին: Քադեսիայի ճակատամարտը թվագրվում է 637 թվականով: Այդ ընթացքում Հազկերտն իր արքունիքով և գանձերով փորձում էր մայրաքաղաքից հեռանալ Հուլուան: Այս մասին տեղեկություններ է հաղորդում Սեբեոսը: Նա գրում է, որ պարսկական զորքի մի մասը անցավ Ատրպատական, որի առաջնորդն էր Խոռոխազատը (ակներևաբար Ռուստամի եղբայրը), որը շտապեց Տիզբոն վերցնելու պարսից արքունիքի գանձերը, թագավորին և իր հետ տանելու քաղաքի բնակիչներին: Սակայն արաբները, դարանամուտ լինելով, հարձակվեցին նրանց վրա, իսկ

[16] Ibn Jaafar, Jarir al-Tabari, III, 2226/I.
[17] Նույն տեղում, 2267-2268/I
[18] Նույն տեղում
[19] Ալ-Բալազուրի, Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր, ներած. և բնագրերից թարգմ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 2005, էջ 286-289:

Խոռոխազատը զարհուրելով փախավ՝ թողնելով գանձերը, փախուստի դիմեց նաև Հազկերտը[20]: Մովսես Կաղանկատվացին ևս անդրադառնում է այս իրադարձություններին և հիշատակում, որ «յութ ամսոջն Յազկերտի, ել միւս անգամ թշնամին և պաշարեաց ի Տիսպոն քաղաքի զամիսս վեց»[21]: Այդ ժամանակ Խոռոխազատ զորավարը Ջվանշիր իշխանի հետ դիմադրեց արաբներին և նախահարձակ եղավ երեք հազար զինվորով: Ըստ պատմագրի՝ նրանք վեց ամիս թույլ չտվեցին, որ թշնամին անցնի Տիգրիս գետը, «մինչև առեալ զթագաւորն ելանէին ի դաստակերտն մեծ[22]… և անտի շարժէին զթագաւորն ի Բեկղաղ»:

Մարտերը շարունակվեցին մինչև «եղև բեկումն չար ի'Տեառնէ Պարսից զորուն ի լրման ժամանակի նոցա, և վերնառաք հրամանն երթայր կործանէր զթագավորութիւն նոցա»[23]:

Միքայել Ասորին էլ գրում է, որ երբ Հազկերտը, փախչելով արաբներից, անցավ Տիգրիսը, նրան հետևեցին արաբները: Պարսիկ զորքը, երբ տեսավ արաբների մեծ բազմությունը, փուլ տվեց կամուրջները իր հետևից[24]: Սակայն արաբներին հաջողվեց անցնել գետը և փախուստի մատնել պարսիկներին: Այս դեպքերի մասին վկայում են նաև մուսուլման պատմագիրները[25]:

Այսպես, Սասանյան Պարսկաստանի մայրաքաղաք Քտեսիֆոնը արաբների կողմից գրավվեց առանց դիմադրության: Արաբական զորքը բռնագրավեց արքունիքի ողջ գանձերը: Այդ ընթացքում Ջալուլա քաղաքի մոտ 637թ. սկսեց կենտրոնանալ

---

[20] Պատմութիւն Սեբէոսի, էջ 213:

[21] Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, էջ 201:

[22] Դաստակերտը և Բեկղաղը Խոսրովի (Պարսից թագավորի) սիրած նստավայրերն էին, գտնվում էին Տիգրիսի դիմաց, Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, թարգմ. և ծանոթագր. Վ. Առաքելյանի, Երևան, 1969, էջ 284:

[23] Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, էջ 201:

[24] Ժամանակագրութիւն տեառն Միխայէլի Ասորւոց պատրիարքի, էջ 307

[25] Բալազուրի, Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր, էջ 289:

պարսկական զորքը՝ Հուրրազադ զորավարի (հայկական աղբյուրներում՝ Խոռոխազատ, Խոռազատ) գլխավորությամբ: Սեբեոսը այս կապակցությամբ գրում է, որ Հազկերտի իշխանության տասներորդ տարում պարսիկները սպառազինված դուրս եկան Իսմայելի զորքի դեմ, որի կազմում կռվում էր 40 հազար զինվոր[26]: Հակառակորդները միմյանց բախվեցին Մարս գավառում[27]: Մարտերը տևեցին երեք օր, մինչև որ պատերազմող կողմերը ուժասպառ եղան: Ըստ պատմագրի՝ շուտով արաբները օգնական զորք ստացան: Այս մասին հիշատակում են նաև մուսուլման պատմագիրները, որ Հաշիմ իբն Ութբա զորավարին, որը Ջալուլայում արաբական զորքի առաջնորդն էր, ուղարկվեց երեք ջոկատ՝ 200 հեծյալով[28]: Պարսկական զորքը գիշերը փախուստի դիմեց, առավոտյան «մնացորդքն զաւրուն Իսմայելի գնացին ի վերաց նոցա… եւ ոչ զոք գտին ի բանակին»[29]: Ըստ Սեբեոսի արաբները ասպատակեցին ամբողջ երկիրը, սրի քաշեցին մարդկանց, գրավելով 22 բերդ: Պարսիկների ճամբարում արաբները մեծ քանակությամբ ավար գտան՝ 30 միլիոն դիրհեմ և ավելի չափով:

Ըստ Միքայել Ասորու՝ Հազկերտը «չորիցս անգամ եկն ի վերայ Տաճկաց և յամենայնն յաղթեցաւ», հետո փախավ «ի սահմանս Թուրքաց, որ Սագաստան կոչեն», հինգ ամիս թաքնվեց և սպանվեց թուրքերի կողմից, որով որ «առին Տաճկունք

[26] Պատմութիւն Սեբէոսի, էջ 141:

[27] Մարս գավառ – Այս տեղանվան առնչությամբ Գ. Աբգարյանը նշում է, որ Մ. Կաղանկատվացին «Բեկ դաղ կոչէ զանուն տեղւոյն մեծի պատերազմին ի մէջ տաճկաց և պարսից», տե՛ս Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիր. Գ. Աբգարյանի, էջ 308:

[28] Ibn Jaafar, Jarir al-Tabari, Tarikh al-rusul wa al-muluk, III, 2474/I.

[29] Պատմութիւն Սեբէոսի, էջ 141:

զիշխանութիւն Պարսից»[30] : Այդ իրադարձությունների մասին վկայում է նաև Սեբեոսը[31]:

Արաբական հետագա արշավանքները դեպի Սասանյան Պարսկաստան, մանրամասն շարադրված են մուսուլման պատմագիրների երկերում: 638թ. Բասրայի կառավարիչ դարձավ Աբու Մուսա ալ-Աշարին, որի անվան հետ է կապված Խուզիստան (հայկական աղբյուրներում՝ Խուժաստան) նահանգի նվաճումը[32]: Արաբների հաղթանակին այստեղ նպաստեց այն հանգամանքը, որ պարսկական բանակը պարբերաբար օգնություն չէր ստանում պարսից արքունիքի կողմից: Հուլուան քաղաքի ու նրա շրջակայքի գրավումը Ալ-Տաբարին թվագրում է 637-ով: Ալ-Բալազուրին էլ նշում էլ, որ քաղաքը արաբներին հանձնվեց հաշտության պայմանագրի հիմքով. բնակիչներին տվեց անձեռնմխելիություն, ապահովություն իրենց անձերի և ունեցվածքի համար[33]:

Այսպես, արաբները շարժվում էին երկրի խորքը առանց լուրջ դիմադրության, տեղական շատ իշխաններ անցնում էին նվաճողների կողմը՝ ընդունելով իսլամ կամ պարտավորվելով հարկեր վճարել: 642թ. Նեհավենդի շրջանի կառավարիչ Դինարը հանձնվեց արաբներին՝ խնդրելով երաշխավորագիր իր և քաղաքի բնակչության համար: Պայմանագրի տեքստը առկա է Ալ-Տաբարիի պատմության մեջ. քաղաքի բնակիչներին շնորհվում էր իրենց անձերի, գույքի, հողերի համար ապահովություն, նրանք կարող էին հետևել իրենց օրենքներին և սովորույթներին՝ ամեն տարի արաբ կառավարչին գլխահարկ վճարելու պայմանով: Բնակիչները նաև պետք է ճանապարհ ցույց տային մուսուլման ճամփորդին, նորոգեին ճանապարհները, օգնեին արաբներին, կացարան

[30] Ժամանակագրութիւն տեառն Միխայէլի Ասորւոյ պատրիարքի, էջ 207-308:
[31] Պատմութիւն Սեբէոսի, էջ 141:
[32] Al-Balazouri, Futuh al-buldan, p. 368:
[33] Նույն տեղում, էջ 295:

հատկացնեին նրանց մեկ օր ու գիշեր, խորհուրդներ տային նրանց [34] : Սակայն եթե նրանք խորամանկեին և դրժեին պայմանագիրը, չէր երաշխավորվում բնակիչների կյանքի և գույքի ապահովությունը: Նեհավենդի ճակատամարտից հետո գրավվեց նաև Սպահան քաղաքը, որի բնակչությանը տված պայմանագրում կրկնվում են Նեհավենդի բնակչությունը տված դաշնագրի պայմանները[35]: Կումիսի բնակիչներն ստացան ապահովության ու անվտանգության երաշխիք՝ պահպանելու համար իրենց ատրուշանները, արաբները պարտավորվցին չսպանել բնակիչներին, այլ հովանավորել նրանց՝ վերջիններիս կողմից գլխահարկ և հողահարկ վճարելու պայմանով[36]: Արաբական զորքը գրավեց նաև Պարսկաստանի Գորգան (Ջուրջան) շրջանը Սուույադ իբն Մուկարրինի գլխավորությամբ: Տեղի բնակչությունը ևս պարտավորվեց հարկեր վճարել[37]:

Օմար իբն Ալ-Խատտաբ խալիֆայի (634-644) օրոք նվաճվեց նաև պարսկական Ատրպատական նահանգը՝ Արդաբիլ մայրաքաղաքով: Տեղի բնակչությանը տրված պայմանագրի տեքստը առկա է Ալ-Տաբարիի երկում: Ըստ այդ տեքստի՝ ապահովություն էր տրվում Ատրպատականի լեռներին, դաշտերին, ինչպես նաև բնակչությանը՝ իրենց կյանքի, գույքի համար, պայմանով, որ գլխահարկ վճարեն յուրաքանչյուրը իր կարողության չափով: Գլխահարկից ազատվում էին կանայք, երեխաները, չքավորները, կրոնավորները[38]:

Ըստ Ալ-Տաբարիի՝ 642թ. գրավվեց Դարբանդը (ալ-Բաբ): Պատմագիրը հաղորդում է, որ այդ երկրամասում ապրում են

[34] Ibn Jaafar, Jarir al-Tabari, Tarikh al-rusul wa al-muluk, III, 2658/I.
[35] Նույն տեղում, 2461/I
[36] Al-Balazouri, Futuh al-buldan, p. 310:
[37] Ibn Jaafar, Jarir al-Tabari, Tarikh al-rusul wa al-muluk, IV Kahira 1977, 2658/I.
[38] Նույն տեղում, 2662/I.

հայեր, որոնք մշտական բնակության վայր չունեն: Զորավար Սույաքա իբն Ամրուն հաշտության պայմանագիր տվեց տեղի բնակիչներին, նաև՝ հայերին: Տեղի բնիկ և եկվոր բնակչությունը պարտավորվում էր օգնել մուսուլմաններին արշավանքների ժամանակ, ենթարկվել մուսուլման կառավարչի հրամաններին: Նշվում էր, որ այն բնակիչները, որոնք կցանկանային անցնել ծառայություն, կազատվեին հարկերից[39]:

Արաբների ներխուժումը 652թ. Սասանյան Պարսկաստանի Խորասան նահանգ մուսուլմանական աղբյուրները կապում են պարսից թագավոր Հազկերտին հետապնդելու խնդրի հետ, որն իրագործվեց այն ժամանակ, երբ նվաճվեց Պարսկաստանի մեծ մասը: Մերվի մարզպանը (հավանաբար Մահույեն) շտապեց առանց կռվի պայմանագիր կնքել արաբների հետ, պարտավորվելով վճարել 100 հազար դիրհեմ, որոշակի քանակով հացահատիկ, պայմանով, որ արաբ զորահրամանատար Իբն Ալ-Կայսը ընդունի իր ժառանգական հողատիրական իրավունքները այն հողերի նկատմամբ, որ ժամանակին պարսից Խոսրով թագավորը շնորհել է իր պապին: Իբն Ալ-Կայսը հաստատեց նրա այդ իրավունքները, մարզպանը և նրա զինակիցները ազատվեցին հողահարկ վճարելուց[40]: Պետք է նշել, որ Պարսկաստանի նվաճման ժամանակ արաբները խուսափում էին բնակչության մասսայական ջարդերից: Շատ դեպքերում էլ սասանյան վարչական ծանր լծի և հարկերի տակ կքած պարսիկ բնակիչները արաբներին դիմավորում էին որպես ազատարարների: Արաբական զորքի հաղթանակները այստեղ բացատրվում էին այն հանգամանքով, որ արաբների դեմ պայքարող պարսիկ աշխարհազորը և տեղի կառավարիչները չէին կարողանում փոխադարձ պայմանավորվածությամբ դիմադրություն

[39] Նույն տեղում, 2665/I.

[40] Ibn Jaafar, Jarir al-Tabari, Tarikh al-rusul wa al-muluk, IV, 2896/I-2900/I.

կազմակերպել: Պարսկաստանի իշխող դասի կենտրոնախույս ձգտումները ևս նպաստեցին արաբների հաղթանակին: Պարսկաստանի նվաճման ժամանակ շատ քաղաքներ, ազդեցիկ կառավարիչներ պայմանագրեր կնքեցին արաբների հետ, պարտավորվելով հարկեր վճարել մուսուլմանական գանձարանին՝ այսպես պահպանելով իրենց հողատիրական ժառանգական իրավունքները:

Այպիսով, Սասանյան Պարսկաստանի տարածքի մեծ մասը նվաճվեց խաղաղ ճանապարհով՝ պայմանագրերի հիմքի վրա: Պարսիկ ազնվականության մի ստվար խումբ էլ իր նյութական վիճակի բարելավման համար իսլամ ընդունեց: Այստեղ հատկապես մեծ դեր խաղաց արաբների կողմից առաջ քաշված մուսուլմանների իրավահավասարության և նրանց հարկերից ազատելու դրույթները: Եվ հետագա դժվարություններից ու հալածանքներից խուսափելու համար պարսիկ բնակչության որոշ մասը իսլամ ընդունեց:

THE CONQUEST OF THE SASANIAN PERSIA IN THE MEDIEVAL MUSLIM AND ARMENIAN HISTORIOGRAPHY

Summary

Gayane Mkrtumyan
PhD, Department of Arabic Studies, YSU
E-mail: g.mkrtumyan@ysu.am

Keywords: *Arab invasion, peace treaty, Persian marzban, head tax payment, personal security, Persian-Byzantine war, Islam sponsorship, land-use and hereditary right, war reparations, Persian king*

The study material of the article is the conquest of the Sasanian Persia in the 2nd half of the 7th century, according to the Muslim and

Armenian sources. Combining different sources, we have tried to represent the complete image of the conquest of the Sasanian Persia, referring also to the treaties given to the population of the occupied settlements.

ЗАВОЕВАНИЕ САСАНИДСКОЙ ПЕРСИИ В СРЕДНЕВЕКОВОЙ МУСУЛЬМАНСКОЙ И АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ

Резюме

Гаяне Мкртумян
к.и.н., доцент кафедры Арабистики ЕГУ
эл. - почта: g.mkrtumyan@ysu.am

***Ключевые слова**: арабское завоевание, мирный договор, персидский марзпан, уплата подушной подати, личная безопасность, персидско-византийская война, исламское спонсорство, землевладельческое и наследственное право, военные репарации, персидский царь*

Материалом исследования статьи стало завоевание Сасанидской Персии во 2-й половине 7-го века, согласно мусульманским и армянским источникам. Объединяя различные источники, мы попытались представить полное изображение завоевания Сасанидской Персии, ссылаясь также на договоры, данные населению оккупированных поселений.